

42

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք

ԿԻՍՍԳՐԱԳԵՏՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵՆԱՏՆԵՐԻ I ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս դասագիրքը՝ համաձայն ՀԺԿ-ի կու-
լեգիայի վերջմամբ ոգտագործվելու յն
հայեմք քանկումքինատների I ողակի
խմբերում:

491.99-8
Ա-55

ՊԵՏՀՐԱՏ — ՈՒՍՄԱՆԿԱՆՐԱՏԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1933

0 4 MAY 2010

Հաստատված է ՀՍԽՀ Լուսժողկոմաթի կոլլեգիայի կողմից

491-99-8

Ա-55

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք

ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵՆԱՏՆԵՐԻ I ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեցին՝ Խ. ԱՅՎԱԶՅԱՆ
Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

2493

4392

4397

ՊԵՏԶՐԱՏ — ՈՒՍՄԱՆԿԶՐԱՏՐԱԺԻՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն — 1933

11.02.2013

1. ՏՈԿՈՐ ՎՈՍԿԱՆՆԸ

Բազմի բանվորական դպրոցում ցուցակագրվելու համար ուսուցչունի Մազթաղին մոտեցավ մագերն սպիտակած, տարիքավոր մի բանվոր:

— Ընկեր Մազթաղ, անունս Վոսկան է, ազգանունս՝ Վահանյան, արհեստով տոկար եմ, խնդրում եմ ինձ ել գրես:

Ուսուցչունին նայեց ծերացած բանվորին, ժպտաց ու ասաց.

— Ընկեր Վահանյան, դուք արդեն տարիքով մեծ եք, յերեկ շուտով աշխատանքից կազատվեք, ձեր դպրոց գալը միտք չունի. չենք կարող ընդունել, ավելի շուտ՝ իրավունք չունենք:

— Յես քեզ ասում եմ՝ գրի, կարդալու ցանկություն ունեմ. ել տարիքը վորն է:

Հերթի կանգնածները հուզվեցին:

— Ե՛յ ընկեր, շո՛ւտ արա, մենակ դո՛ւ չես:

Վոսկանը մոտեցավ բանվորական դպրոցի վարիչին.

— Ընկեր վարժապետ, յեթե ես տարի ինձ ուսումնարանում տեղ չտաք՝ վատ կլինի: Վառասուն տարվա բանվոր եմ...

— Ընկեր Վոսկան, ցավում եմ, բայց ի՞նչ արած, կարգն այդպես է:

— Բա դուք ճիշտ խոսքն ի՞նչպես եք կատարում:

— Ո՛ւմ խոսքը:

— Նրա, վոր ասել է՝ ռավեաական յերկրում մի անկերթ, անգրագետ մարդ չի լինելու: Ի՞նչ կասես:

Գտն. և լեզվ. խմբագիր՝ Խ. Այվազյան
Ցեխ. խմբագիր՝ Գ. Չենյան
Մշակողներ՝ Ս. Շահբաղյան
Հրատ. Մ 2599, Գրավ. Ք 8170 (ը)
Ցիքած 80.000, Գտն. 1418, Գեանդատի տպարան



20437-59

Հանձնված և արտագրված 1933 թ. հունիսի 7-ին
Մատարված և ազգագրված 23 հունիսի 1933 թ.

— Հետո՞ ինչ. մենք այդ գիտենք, — ժպտաց վա-
րիչը:

— Հետո են, վոր մեզ հուպ կտան: Հեղափոխության
15 տարին լրանում է. կուսակցությանը հաշվի կնստի
ու մեկ էլ կտեսնի, վոր Սե Բազաքի գործարանի բան-
վոր տոկար Վոսկանը մնացել է անգրագետ... Ի՞նչ կալա-
տասխանեք հը՞, տսե՛ք:

Ու հաղթանակ տարածի նման մի քայլ առաջ գնացե-
՛լ Վարիչն ու ուսուցչուհին իրար նայեցին հուզված:
Բանվորները ժպտում էին, խրախուսում Վոսկանին:

— Վորպես բացառություն, ընդունեք, — ասաց վա-
րիչը: Բանվորները ծափահարեցին:

Վոսկանի ու բախությանը չափ չկար:

2. ՄԵՐ ԿՈՒԽՈՋԻ ԱՐՏԵՐԳ

Մեր կոխոզի արաները
տրակտորը վարել է,
կոխոզն՝ այսօր ծովի պես
կանաչել է, ծաղկել է:

Մեր կոխոզի արաները
նաշխուհն բերքով հասել են,
ցորենի ծով հասկերը
նախ բերքերով ցզել են:

Ու բացվել են վարդերը,
որորվում են հասկերը.
հազար երեսկ նոր կյանքին՝
ջենացել են գաղտերը:

3. ԱՊՍՍԱՄԲՈՒԹՅՈՒՆ

1905 թվի հունիսի 14-ի առավոտյան, յերբ տեղի
յեր ունենում «Պատյոմկին» անագին զրահանավի սովորա-
կան մաքրումը, նավաստիները նկատեցին, վոր ճաշի
համար պատրաստված միսը հոտած է, վորդերով լի:

Այս լուրը տարածվեց բոլոր նավաստիների շրջա-
նում, զայրույթ բռնկեց և «կայծից առաջացավ բոց»:

— Սրիկա՛ սպաներ: Ձեն հետաքրքրվում, թե ինչ
մսով են մեզ կերակրում:

Վրա հասավ ատելի հրամանատարը և կարգադրեց.

— Ճաշը պատրաստել, և ով վոր միսը գննի, անունը
նշանակել և հետո ինձ զեկուցել:

Յերբ ճաշը պատրաստվեց և յերբ հրամայեցին ճա-
շել, վոչ վոք չմոտեցավ ճաշին, վոչ վոք չշարժվեց
տեղից:

Անմիջապես հայտնեցին հրամանատարին, վոր գլխա-
վոր սպայի հետ միասին շտապեց «կարգը վերականգնել»:
«Պատյոմկին» նավաստիների ամբողջ ջոկատը, 700
մարդուց ավելի, տախտակամածն են կանչում և հրամա-
յում շարքի կանգնել:

Շարքի առաջ կանգնած գլխավոր սպան մի հանդուգն
և գրգռիչ մառ է ասում:

— Յես քանի անգամ ասել եմ ձեզ, վոր նման ան-
կարգություններ գինվորական հափի վրա անթույլատրելի
յեն: Այդ բանի համար ձեզպեսներին ա՛յ թե վորտեղից
են կախում, և նա մատնացույց է անում կայմի ծայրը:
Սպա բավում է մի անտրկու հրաման.

— Ով ուզում է բորչ ուտի, այս կողմը գա:

Շարքից գուրս են գալիս միայն նավի հին ծառա-
յուղները, յենթասպաները:

Ամբողջ շարքը քարացած կանգնել եւ:

Այդ միջոցին վորոտում ե մի նոր հրաման.

— Պահակախումբ, վե՛ր:

— Յեղբայրնե՛ր, ի՛նչ եք անում: Մտաբերեցե՛ք մեր յերգումը, վոր մերոնց վրա չպիտի կրակենք, — կանչեց նավաստի Մատյուշենկոն առաջ վագերով:

Յեվ պահակախումբը, մի մարդու պես, հրացանները վայր թողեց, փողը դեպի գետին:

Այդ նշանակում եր, թե չենք ուզում կրակել:

Իսկ Մատյուշենկոն նոր ուժով կանչեց.

— Յեղբայրնե՛ր, մեր ընկերներին մենակ չթողնենք: Վերցրե՛ք հրացանները, փամփուշտներ դրեցե՛ք: Զարկեցե՛ք ժողովրդի դահլճներին:

Յեվ կատարվեց հերոսական գործը:

— Կորչի՛ ինքնակալությունը: Մահ բռնակալներին,

— բավում ե «Պատյոմկին»-ի վրա:

Յեվ հրացանները վորոտում են:

Ապստամբությունը տաքանում ե:

4. ՍՐՅՈՒՆՈՏ ԿԻՐԱԿԻ

Զմեռվա մի սաստիկ ցուրտ առավոտ եր: 1905 թվի հունվարի 9-ին (22) Լենինգրադի բանվորական թաղերից անագին ամբոխ եր առաջ շարժվում: Առաջից տանում եյին թագավորի ու սրբերի պատկերները. յետևից գնում եյին բանվորները, բանվորուհիներն ու նրանց յերեխաները տոնական հագուստներով:

Ո՛ւր եյին գնում և ինչո՞ւ:

Սույն ու կարիքն եյին ստիպել նրանց՝ սիրտ անել թագավորի մոտ գնալու և խնդրելու, վոր իրենց պաշտպանի հարուստներից ու վտատիկաններից:

Թագավորին ուղղած իրենց խնդրագրում նրանք գրում եյին.

«Թագավո՛ր, մենք բանվորներու, մեզ կանայք ու յերեխաները և մեր ծերունի ծնողները յեկել ենք քեզ մոտ արդարություն և պաշտպանություն խնդրելու:

«Մենք ծայր աղքատության ենք հասել, մեզ ծանրաբեռնում են անտանելի աշխատանքներով, մեզ անպատվում են, մեզ մարդու տեղ չեն դնում, մեզ սարուկ են համարում, վոր պետք ե միայն համբերենք ու լռենք: Ել ուժ չմնաց, թագավոր, մեր համբերությունը կտրվում ե, հասել ե այն սոսկալի բուպեն, յերբ մեռնելն ավելի լավ ե, քան չտեսնված անարդանքներ կրելը»:

Յերկու հարյուր հազարից ավելի ամբոխը մոտենում եր թագավորի պալատին:

Գնում եյին հանգիստ, տոսնց յնրդի, առանց կարմիր դրոշակների... Գնում եյին խնդրելու, տղաչելու...

Յեվ հանկարծ՝ հրացանի կրակ:

Առաջին շարքերում զիոթություն ընկավ: Կարծե-

ցին, թե ինչ վոր սխալ բան կատարվեց: Շարունակեցին առաջ գնար: Նորից կրակեցին:

Մեկը ընկավ կուրծքը վիրավոր... Սմբուը կանգ առավ...

«Մի՛ թե չսխալի հասնենք թագավորին, մի՛ թե կրա-կում են մեզ վրա», — շնչացին ամենքը:

Հինգ հազար հոգի վիրավորվեց, հազար յերկու հա-րյուր տառնվեց հոգի սպանվեց. և այդ բոլորը մի ուրում, Արշունոտ Կիրակի ուր, հունվար 9-ին (22):

Հափադույն բանվորները հետ թագավորն այս ձևով հաշիվ մաքրեց:

Այդ ուրից բանվորները հասկացան, վոր քանի թա-գավոր կա, նա միշտ բուրժուազիայի կողմը կլինի, և բանվորն ուր չի ունենա:

«Բանվոր դառակարգը քաղաքական կռվի մեծ դաս ստացավ, — գրում եր Իլիշը այն ժամանակվա «Վալերյոզ» թերթում, — պրոլետարիատի հեղափոխական կրթությունը մի ուրում այնքան առաջ գնաց, վոր չեւ կարող առաջ գնալ ամիսներում և տարիներում»:

«Հեղափոխական մոմենտի ամենամերձավոր խնդիր-ներից մեկը դառնում ե ժողովրդի զինումը»:

«Միայն զինված ժողովուրդը կարող ե ազաաություն ձեռք բերել»:



5. ՊԵՏԻ Ե ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՏՆԵԼ

Փոքրիկ բնակարանում նստած էյին միքանի մարդք՝
Ժողովի քարտուղարն արձանագրեց՝

Ընթացիկ մոմենտի խոսքը պատկանում է...

Նա ինչ-վոր ազգանունն գրեց, բայց հետո իսկույն
խնամքով ջնջեց:

— Այո, ավելի լավ է առանց ազգանվան, — առաց
նրա հարևանը, վոր նալեց արձանագրութեանը:

Իսկ զեկուցողը, վորի ազգանունը ջնջել էին, արագ
բարձրացավ աթոռից:

Դա Լենինն էր:

Չորս ամիս շարունակ նա թագնվում էր Ժամանու-
կավոր կառավարութեանից: 1917 թ. հուլիս ամսին բան-
վորների անհաջող ապստամբութեանից հետո բուրժուա-
զիան վորոնում էր Լենինին, վորպեսզի սպանի նրան:
Բայց բանվորներն աջակցեցին Լենինին թագնվելու, և
նա Պետրոգրադից հեռացավ:

Լրագրերը գրում էին, վոր Լենինը փախել է ստոր-
ջրյա նավակով կամ ողանավով: Իսկ Լենինն այդ Ժամա-
նակ ապրում էր խոտհորքում, վրանում, Մետրոպոլի-
մոս:

Լենինին ուղարկում էին բոլոր լրագրերը, գրում
էին նամակներ: Ուստի և նա լավ տեղյակ էր, թե ինչ
է կատարվում Պետրոգրադում և ամբողջ յերկրում:

Արգեն հոկտեմբերին Ռուսաստանում համարյա թե
բոլոր բանվորներն ու գինվորները բալլեիկներ էին կոչում
էին:

Լենինը վճռեց՝ Ժամանակն և իշխանութեանը վեր-
ցնելու:

Նա արգեն միքանի նամակ էր գրել իր կուսակցա-
կան ընկերներին:

— Պետք է ցրել Ժամանակավոր կառավարութեանը

— Դանդաղելը հանցագործութեան է: Ժամանակ և
իշխանութեանը վերցնել:

Լենինը կարծում էր, վոր Պետրոգրադի բալլեիկնե-
րը չափազանց դանդաղ են գործում:

Յեվ նա ինքն անսպասելիորեն յերևաց Պետրոգրադում:
Բալլեիկների կուսակցութեան կենտրոնական Կոմի-
տեն հավաքվեց Լենինի գլխավորութեամբ:

Ժողովը տեղի ունեցավ գաղտնի:

Ահա թե ինչու քարտուղարն այնպես խնամքով ջրն-
ջեց Լենինի ազգանունն արձանագրութեան մեջ:

Չե՞ վոր արձանագրութեանը կարող էր Ժամանակա-
վոր կառավարութեան ձեռքն ընկնել, և այն Ժամանակ
նա կիմանար, վոր Լենինը Պետրոգրադումն է:

Լենինին ճանաչել չէր կարելի: Նա ամիլել էր միբուքը:

Լենինը ձեռքերը գրպանները դրած, անցավ սենյա-
կով և սկսեց ճառը:

Նա խոսում էր այն մասին, վոր չի կարելի այլևս
վոչ մի բոլոր սպասել: Բանվորները բալլեիկների կոչում
են, գինվորները նույնպես: Դրա համար ել պետք է շու-
տով տապալել կերենսկուն և իշխանութեանը վերցնել:

Ընկերներից մի քանիսը համաձայն չէին Լենինի
հետ: Բայց կենտրոնական Կոմիտեի մեծամասնութեանը
մտածում էր այնպես, ինչպես Լենինը: Վիճաբանութեան-
նից հետո կենտրոնական Կոմիտեն վորոշեց՝

«Իկսել զիմված ապստամբութեանը»:

6. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՓԱՆՆՆԻՆԳԸ

Ձիվորները չլիք կազմած՝ Ժամե-Ժամ ավելի մոտե-
նում էին Ջուլուսին պալատի հրապարակին: Նրանց
շարքերն ավելի ու ավելի խտանում էին: Ժամի Թ-ի մոտ
պալատը շրջապատված էր:

Ամենքը լարված սպասում էին գրոհի մեծ ըռպելին...
Ժամի յերեքին ժամանակավոր կառավարութեան
դրութիւնն անհուսալի լեր... Արդեն յերկաթուղիներ
բոլոր կայարանները, հեռախօսը, հեռագրատունը, երեք-
տրական կայարանը, ջրանցքը գտնվում էին մեր ձեռ-
քում...

Միքանի ակնթարթ...

Յեւ Պետրոգրադի փողոցներում վորոտացին թնդա-
նութները, բայց վոչ ժողովրդի դեմ, այլ ժողովրդի հա-
մար:

Մի քանի հրանոթներ պայթեցին Ձմեռային պալա-
տի միջանցքներում: Տատանումներին վերջ եր տրված:
Նավաստիները, կարմիր-զվարդիականները, զինվորները՝
գնդացիւրային խաչած կրակի տակ՝ թռչում էին Ձմե-
ռային պալատի առջեւ շինված բարբիկադների վրայով,
տապալում էին նրանց պաշտպաններին և ներս խուժում:

Մասսաները ներս են խուժում սենյակը: Նրանց մեջ
է ընկ. Անտոնովը: Այն, ինչ վոր անվանում են ժամա-
նակավոր կառավարութիւն, այնտեղ է... զրեթե մեռած
Ֆիդիկայեւ:

— Պետրոգրադի Խորհրդի Ռազմա-Հեղափոխական
Կոմիտեյի անունից հայտարարում եմ ժամանակավոր կա-
ռավարութիւնը տապալված, — հայտարարում է Անտոնով-
ը: — Բոլորդ ձերբակալված եք...

Տապալվածները թոթովանքով խնդրում են, վոր
լրենց պաշտպանեն մասսաներից... Նավաստիները դուրս
են տանում նրանց սենյակից: Աղաղակներ: — Տվեք մեզ
Կերենսկուն... Կերենսկուն... Նա փախել է Պետրոգրադից
վորպեսզի ռազմաճակատից գործեր բերի:

Միջանցքները թնդում են հուզմունքի, գալըութի,
կատաղութեան աղաղակներից... Ձերբակալվածներին տա-

նում են ներքե... բակը... ահեց են կացնում դռներով...
բարբիկադների վրայով... դեպի պալատի հրապարակը...

Հրապարակում զինվորների գալըութի աղաղակներ
են լսվում... «Գնդակահարե՛լ... մահ... մահ»: Տերեշչենկո-
ւին, Կոնովալովին և ուրիշ մի յերկսին միջանի հարված
են տալիս... Կարմիր զվարդիականները հորդորում են
զինվորներին: Դեկավարներն աղաղակում են. «Մի մթա-
պեք պրոլետարական հաղթանակը... Կատաղած զինվոր-
ները լետ են քաշվում ձերբակալվածներից: Կարմիր-զվար-
դիականներն ողակում են նախկին կառավարութիւնը:
«Հառաջ»: — Ողակն առաջ շարժվեց դեպի Պետրոպոլիտս-
կի բերդը: Տանում են հեղափոխութեան դեմ ստեղծված
նկուղները:

7. ՄԱՅԻՍՅԱՆ ՈՐԵՐԻՆ

Յես շատ շուտ ընտելացա բանտի կյանքին: Ինձ
կանչում էին «բանտի աղջիկ»:

Դաշնակցական կառավարութիւնն իբր թե պատժե-
լու համար ինձ բանտարկեց, սակայն այնպիսի միջավայր
գցեց, վոր յես կոմունիստական վոգով դաստիարակվեցի
և այնուհետեւ ել վոչ վորք չկարողացավ կտրել ինձ կու-
սակցութիւնից:

Ոգոստոսի վերջն եր: Մի անգամ ներս մտավ գլխա-
վոր վերահսկիչն ու հայտնեց, վոր դատախազը կանչում
է ինձ: Գնացի: Շատ ելի լսել այդ մարդու մասին, բայց
չեյի տեսել: Նա ինձ վրա առաջին խի հայաքից վատ
տպավորութիւն թողեց, գուցե նրա համար, վոր իմ առաջ
կանգնած եր դասակարգային թշնամի: Յերկար ճառե-
լուց հետո, նա ասաց.

— Դուք դեռ չահել աղջիկ եք, ինչ գոց՝ ունեք այն

սրիկաների հետ: Մի դիմում գրեցեք, վոր նրանք ստիպմամբ ձեզ տարել են իրենց շարքերը: Այդ դիմումը մենք կտպենք մեր թերթերում. բանտից կադատենք ձեզ ու աշխատանք կտանք, վորովհետև հայ ազնիվ եք, խղճում եմ ձեզ:

Իմ կյանքում դրանից ավելի զգվանք չեի գգացել, այնպես ջգայնացած եյի, վոր հազիվ-հազ ինձ դսպելով ասացի:

— Վերջապես բախական ե... — և դուրս յեկա նրա գրասենյակից:

Յերբ կամեաւ վերադարձա, ընկերներս անմիջապես ինձ շրջապատելով՝ սկսեցին հարց ու փորձ անել: Բայց լեւ աչքան հուզված եյի, վոր չկարողացա վռչինչ պատասխանել:

Այդպես շարունակվում եր մեր կյանքը բանտում՝ մի որ կուշտ, մի որ քաղցած:

Սեպտեմբերի 13-ին նշանակվեց 18 կոմունիստների դատը, վորոնց թվում և իմը:

Դաշնակցական արտակարգ դատարանը բաղկեկիներին դատեց, վորպես «ազգի դավաճաններ»:

Յես, վորպես անչափահաս ազատվեցի բանտից, իսկ մյուսները 4—5 և տասը տարով կալանքի յենթարկվեցին:

Դաշնակցական կառավարութիւնը, սակայն այդքան կյանք չունեցավ, վորովհետև Մալխան ապստամբութիւնն արդեն ստորագրել եր դաշնակների մահվան դատավճիռը, վորը կատարվեց 20 թվի նոյեմբերի 29-ին:

8. ԻԼՅԻՉԸ ԳՅՈՒՂՈՒՄ

1.

Մոսկվայի նահանգի Կաշինո գյուղում 1920 թվին կազմակերպվեց գյուղատնտեսական «Արշալույս» ընկերութիւնը: Այդ ընկերութիւնը հաշոգացրեց գյուղում ելեկտրականութիւն անցկացնել: Գյուղացիներն այնչափ ուրախ եյին, վոր ելեկտրական լույսը գրավեց նավթի լամպի տեղը: Գյուղական ընդհանուր ժողովում վորոշեցին ելեկտրականութիւն բացման առթիվ գյուղում տոն կատարել: Վորոշեցին՝ կենտրոնից գործիչներ հրավիրել:

Ընկերութիւն վարչութիւնը մտածեց հրավիրել Ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահ ընկեր Լենինին: Վտմանք գեմ եյին այդ առաջարկին, մտածելով, վոր ընկեր Լենինը շատ զբաղված ե և չի կարող զար Բայց և այնպես վորոշեցին Լենինին հրավիրագիր ուղարկել: Վարչութիւն անդամները դողդոջուն ձեռքով ասորագրեցին այդ հրավիրագիրը:

2.

Հասավ 1920 թվի նոյեմբերի 14-ը: Կաշինո գյուղի համար պատմական որբ: Ժամի 12-ին ավտոմոբիլով հյուրերն սկսեցին գար: Քաղաքի կողմից ավտոմոբիլն արշավում և ուղղակի գետի բազմութիւնը:

Ավտոմոբիլից դուրս ե գալիս Կաշինո գյուղացի կուկովը: Նրանից հետո դուրս ե գալիս 50 տարեկան մի մարդ:

Վարչութիւն անդամները մտեցան յեկվորներին և վողջունեցին:

— Բարև, ընկեր:

Ավտոմոբիլից իշած մարդը սիրալիւր բարեւում ե ամեն-
քին, սեղմում ե բոլորի ձեռքը ե ասում իր անունը— Լենին:

Ամենքը քարանում են զարմանքից, չեն հավատում
իրենց ականջներին ու աչքերին:

Հանրապետութեան առաջնորդն այնքան համեստ ե
հագնված, այնպես հասարակ ձևով ե առանց թիկնա-
պանների:

Առաջին բառից Վլադիմիր Իլյիչը դառնում ե գլուղի
մարդը:

Այդ մեծ մարդու զարմանալի պարզութիւնը միան-
գամից հմայում ե գլուղացիներին:

Կարճ վողջույններից հետո հյուրերը հրավիրվում են
ներս: Բերում են թեյ ե ուտելիք:

Սկսվում ե ջերմ, մտերմական զրույց գլուղացիների ե
Լենինի մեջ:

Ապա տեղի յե ունենում գլուղացիական միտինգ:
Ընկերութեան վարչութեան նախագահը միտինգը բաց ե
անում, վողջույնի խոսք ե ասում ե իր ճառից հետո
խոսքը տալիս ե ընկ. Լենինին:

Իլյիչը խոսում ե հուզմունքից դողացող ձայնով:
Շնորհակալութիւն ե հայտնում հրավերի համար: Ասում
ե, վոր իր կյանքում առաջին անգամն ե գտնվում տո-
նական հագուստներով ե ուրախ տրամադրութիւններով
գլուղական Ժողովրդի մեջ, վոր իրեն զգում ե վորպես
իր մոտ բարեկամների ե ազգականների շրջանում:

Գլուղական բազմութիւնը մեծ սիրով ե խում Իլյիչի
պարզ խոսքերը, արցունքն աչքերին վորսում ե նրա
լուրաքանչիւր բառը:

Ձեկուցման առիթով գլուղացիների բոլոր հարցերին
Լենինը պարզ պատասխաններ ե տալիս:

9. ԻԼՅԻՉԻ ԲՈՒՆՏԸ

Այսպես ե կոչվում նավթաշխարհի այն մասը, ուր
կասպիականը հետ են տվել, նրա մագիլներէից խել ցա-
մաքը ե վիշկաներ են աճեցնում այնտեղ:

Դեռ տասը տարի առաջ, այստեղ ծովն ե տարածվել
ու ձկների պարը: Իսկ հիմա հաղթահասակ վիշկաներն են
ծովափին, ցամաքի վրա, ջրերում:

Ծովը նավթի բուլբուլ ե շնչում: Ծովը բլանում ե
վիշկաների վոտները:

Ծովի ջուրը քամում են ե կաշալկան նավթ ե քա-
շում ծովից:

Շահնգը՝ լերկաթե «անակիզը ու անվերջ» այս խո-
ղովակն անա իջել ե 518 մետր, ծակոտել հողի կուրծքը,
ցեխախառն ավազ, հող ու քար ե դուրս շարաւում: Հոտո-
տում, վորոնում ե նավթը ե նրա համար ճանապարհ
հարթում:

Անընդհատ կատարելագործում, անընդհատ առաջ-
խաղացում: Այսպես ե պաշարում Բագվի պրոլետարիա-
տը բնութեան դեմ: Ամերիկյան վերջին մեթոդովն ե նավ-
թը դուրս գալիս հողից, ծովից: Միայն այսպես կարելի
յե արդարացնել Իլյիչի անունը: Միայն այս կերպ ե կա-
րելի նրա պատգամները կատարել:

Ֆշշում ե նավթահամ ծովը: Մերթ թշնամաբար իր
ալիքների հարվածներով հարձակվում ե աշխատանքի այս
բերդերի ու աշտարակների վրա ու պարսկած հետ նա-
հանջում ե մերթ հանդարտ ու սիրալիւր շոյում նրանց
պատմանդանները:

Փայտե կամրջակները կապում են վիշկաները ցամա-
քին: Փայտե կամրջակները դորշ ու նավթոտ են: Իսկ
ցամաքում ժանդարմկած ու նավթածածկ ջրեր կան, ծիա-



ծանի գուշներով, ուր ուրվագծվում են վիշկաների հասակները:

Վիշկաները՝ ցամաքում, վիշկաները՝ ժանգաղներում, վիշկաները՝ ծովում, բանվորական չլուտ բազուկների պես վեր բռնեցըված:

Այդ բազուկները սանձել են ծովը, հեռ շարտել նրան, նվաճել ցամաքը: Քամում են հողի թանկագին արյունը: Ծակոտում յերկրի կուրծքը: Անխնա, անխնա:

Կերտում են նոր աշխարհ: Այդ հաղթական բազուկները:

10. ՇԱԽՑՈՐԻ ՏԵՐԳՐ

Մենք շախտյորներ ենք,
շախտերում քանդում ենք,
վոր յերկրին ածուխ տանք
ու կյանք:

Մեր ուժը լարել ենք
մշուշը ցրել ենք
ու յերկրին ածուխ ել
կտանք:

Մենք շախտյորներ ենք,
հազար ու հզոր ենք,
յերկրի տոնն խորշում
մենք կանք:

Մենք շախտյորներ ենք,
կռվում հաղթողներ ենք,
այս թեժ կռվում գեռ
մենք կանք:

Վեկապեն ասել ե,
պեզզում խոսել ե,
վոր յերկրին ածուխ տանք
ու կյանք:

Յերկիր մեր, յերգի՛ր գու,
քեզ կամքը մեր հատու,
քեզ համար՝ մեր կյանքն ել
կտանք:

11. ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ, ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ

Ստալինին, Կեռնի, Մոսկվա

Սիրելի ընկեր-

Ուղարկում եմ ձեզ 100 դրոյար՝ ձեր հաջեցողութամբ խորհուրդների կարիքների համար ծախսելու: Բանվորների յերկիրը, վոր կառուցում ե ապագա աշխարհը, կարիք կզգա փողի: Սա իմ ոգնութունն ե, ըստ իմ ունեցած միջոցների: Յես սրավարձով աշխատող բանվորուհի յեմ՝ յվացարար: Սպրել եմ ու ապրում եմ ազատության մեջ: Գտնվում եմ մաշված շորերի մեջ: Աշխատում եմ որական 12 — 16 ժամ, չիմանալով ինչ բան ե արձակուրդը: Մի խոսքով՝ «անընդհատ շարաթ»: Յեվ ահա ինձ հաջողվեց հավաքել մի բան՝ ԽՍՀՄ հարազատ բանվորության համար: Ձեր թշնամիներն աշխատել են և դեռաշխատում են իրենց բոլոր ուժերով արհամարհել ձեզ: Ցույց տվեք իմ այս նամակը նրանց և ասացեք, վոր աշխատեմ միլիոնավոր մաքրիկ կան, վորոնք հավատում են ձեզ, ձեր յերկրին և կոմկուսակցությանը և դրա համար ոգնում են ձեզ իրենց ուժերը ներածին չափ: Մեր ընտանիքը յերեք հոգուց ե բաղկացած — ամուսինս, վորդիս և յես: Մեզ մոտ չկան խոսակցության ափելի լավ նյութեր, քան ԽՍՀՄ: Դուք բանվոր գոտակարգի նեցուկն եք, լավագույն հույսը, վորոնք ապրում են և շնչում անիծված ստրկության ճիրաններում: Մենք ձեզ ենք ուղարկում մեր ամենաջերմ փողջոյնները:

Առաջադրում միլիոններ կան, վորոնք ԽՍՀՄ հեռ են:

* *

Ընկեր Ստալինը շնորհակալություն ե հայտնել Ուլմարին:

Դրամը հանձնված ե Մոսկվայի Տրյոլգուրնայա մանածագործարանի բանվորուհիների մանկական մսուրին:

12. ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԸ



Իոսիֆ Ստալինը ծնվել է Վրաստանում, 1879 թ. կոշիկակար բանվորի ընտանիքում: 13 տարեկան հասակում նա մտավ միջնակարգ դպրոց, բայց չվերջացրեց. նրան հեռացրին դպրոցից, ցարական իշխանությունը դեմ բանվորների մեջ հեղափոխական աշխատանք կատարելու համար:

1901 թ. մինչև 1917 թ. ընկեր Ստալինը 10 անգամ ձերբակալվել է, բանտ նստել ու աքսորվել, տաժանակիր աշխատանքի դատապարտվել:

1913 թ. մինչև 1917 թ. նա աքսորված էր Թուրքեստան:

Ընկ. Ստալինը Լենինի և կուսակցության կենտկոմի մյուս անդամների հետ ախտիվ կերպով մասնակցում էր Հոկտեմբերյան հեղափոխության որերին տարվող պայքարին:

1917 թվից մինչև 1923 թիվը նա յեղել է ազգային գործերի ժողկոմ, Բանդյուդեսչության ժողկոմ, Ռազմահեղափոխական Սորհրդի անդամ: Իր ցույց տված ռազմական ծառայությունների համար նա արժանացել է Կարմիր դրոշի շքանշանի:

1923 թվից ընկ. Ստալինը Համկոմկուսի (բ) կենտկոմի գլխավոր քարտուղարն է, իսկ 1925 թվից՝ Կոմինտերնի Գործադիր Կոմիտեյի նախագահության անդամ:

Ընկ. Ստալինը կուսակցության սիրված առաջնորդն է: Նրա հմուտ և ուժեղ ղեկավարության տակ կուսակցությունը գործում է լենինյան ճիշտ ուղիով և հաջողությամբ տանում սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում:

13. Գ Ի Շ Ե Ր

Գեղեցիկ ու զով
գիշեր ե պայծառ,
անուշիկ քնով
քնած ե աշխարհ:

Ծառերը մեղմիկ
քամուց որորվում,
հեզիկ ու նազիկ
յերգ են սլալում:

Գետափին, թե ուր
պույվույում ե բուն,
գետակն ել տխուր
հրաժեշտ ե յերգում:

Իսկ լայնատարած
յերկնադամաբով

լուսինն ե կամաց
անցնում սահելով:

Աստղերն ել սիրուն
ժպիտով փայլում,
իրենց սիրելուն
ճափա յեն գնում:

Գեղեցիկ ու զով
գիշեր ե պայծառ,
անուշիկ քնով
քնած ե աշխարհ:

Ու քնած յերկրին
գետակն ու բուն
յերգով միասին
որոր են ստում...

14. ԳԻԳԱՆՏԻ ԳԱՇՏԵՐՈՒՄ

Կոմբայնը — դաշտերի նափն ե: Կոմբայնիստը՝ կա-
պիտանը: Նա կանգնած ե կամրջակի վրա ու վարում ե
մեքենան:

Կոմբայնի հարիչը կտրում ե հասկերը, փոցիներով
պրանց հափաքում ծեծիչի թմբուկի տակ: Հացահատիկը
լցնում արկղը: Յեվ ահա արկղը լիքն ե: Բեռնավառն
կրում ե հացահատիկը ե տանում ելեվատոր:

Գիգանտի դաշտերը լավ բերք են տալիս: Պետք ե
ջուտալ հափաքել: Դանդաղել չի կարելի: Հացահատիկը
թափվում ե, վառ յեղանակը վառում ե հացին:

Շտաբը ել ավելի յեր աշխատում, քան առաջին որե-
րը: Տելեֆոնից չելին հեռանում: Հարցնում ելին, թե ինչ-
պես ե գնում բերքահավաքը:

Բրիգադներից պատասխանում եյին.

— Ամեն ինչ կարգին ե: Կոմբայնը մի քիչ փչացել
եք՝ շինեցինք:

— Աշխատանքը լավ ե գնում: Սպասում ենք բեռ-
նավառներին: Կարգադրեցեք շտապ կրեն հացահատիկը:

Առաջին տարին Գիգանտը յերկրին ավեց վեց հա-
րյուր հազար ցենտներ հացահատիկ:

Սովետդի լաբարատորիայում վերցնում են ցորենի
հատիկները, մեկ-մեկ կշռում, հատկութունները վորսշում:
Լավ հատիկ ե:

— Առաջին տեսակի, — ասում են լաբարատորիայում:
Ելեվատորից հացահատիկը լցվում ե անձիշապես վա-
գոնները: Միքանի բոպե ե վազոնը լիքն ե:

Իսկ ամբարներից ցորենը պարկերով կայարան են
կրում արակտորային գնացքները:

Ամեն որ կայարանից գնացքներ են մեկնում ցորե-
նով բեռնած:

15. ԹԵՍԻ ԳԱՇՏԵՐՈՒՄ

Սրեկը ծիրանագույն արեվելքից գեռ նոր եք գալիս
հանել իր փոկեզոծ ճաճանչները: Դեպի Բաթում տարած-
ված թեյի դաշտերն ու լեզիպտացորենի ընդարձակ աք-
տերը գիշերվա առառ անձրիից զովացած սպասում ելին
արևի շողերի վողջույնին: Յեվ ծանրացած թեյի թփերից
գիշերային թանձր ցողը կամաց-կամաց անհետանում ե
ե բարձրանալով լեզիպտացորենը զվարթանում, հասակով

մեկ կանգնում ու կարծես իր գոհացնող վողջույններն ե ուղարկում արևին:

Գնացքը մոտենում է Չակվա կայարանին, վորտեղ խոշոր տառերով՝ ալ կարմիր տախտակի վրա գրված է «Չակվա — Թեչի Սսվխոզ», և այդ ցուցանակն իր տառերով ազդանշում է, վոր աչդտեղ, նոր կոչեկտիվ սկզբունքներով՝ վորքան աշխատավորական բանակներ միացած ստեղծում են նոր կյանք, նոր կուլտուրա և խորհրդային թեր:

Անցնում ենք պլանտացիաները, մտնում Փաբրիկան, վորտեղ տարբեր մեքենաների տակ պատրաստվում է մի քանի տեսակ թեր:

Այստեղ աշխատում են մի քանի հարյուր բանվոր:

ԹԵՅԻ ՖԱԲՐԻԿԱՅՈՒՄ

Նորակառույց, հսկայանիստ մի խոշոր շինք է այն, վորի կառուցումն ավարտված է մոտ ժամանակներում: Դասավորված են լավագույն մեքենաները:

— Ուղղակի հիպնալ կարելի չե այս մաքրության և խնամքի վրա, ասում է բնիկը:

— Տես, վորքան զեղեցիկ են շինված թեչի թվերը, կարծես մաքրարտի հասիլներ լինեն. աչ, յերևում է վոր գործին լավ խնամքով վերաբերմունք կա:

Անցնում ենք Փաբրիկայի դանազան ցեխերը: Ամեն տեղ յերևում է սովխոզի ուժեղութունն ու կազմակերպված, պլանային աշխատանքը:

Մեզ առաջնորդ յերխառարդ բանվորունին մանրամասն բացատրում է, թե վոր մեքենան վորքան գործ է անում, ինչ վորակի և այլն:

— Իսկ այս չինացի բանվորը յերկաթ ժամանակ է վոր աշխատում է ապտեղ, — հարցնում եմ յես:

— Այն. նա շատ վաղուց է, վոր աշխատում է չաչի Փաբրիկայում և իր բարեխիղճ աշխատանքով վաշելում է բոլորիս համակրանքը, — պատասխանում է մեզ առաջնորդը:

Աշխատանքի ուժեղ թափով ներշնչված՝ յուրաքանչյուր բանվոր ղեկավարում է սոցիալիստական հայրենիքի Փաբրիկայի մեքենան:

16. ՊԱՌԱՎ ԹՐԲՈՒՆԻՆ

Գնացքը վերջին անգամ սուլեց և ուժգին թափով առաջ սլացավ: Վաղոնում շատ եր տաք, ողբ ճնշող: Մեր գլխաց նստած ճանապարհորդներից մեկը թաշխինակով սրբում եր իր ճաղատ դուխը, վորտեղ յերևում էր մեծ վերքի տեղ՝ ըստ յերևույթին աչդ վերքը մնացել եր շախտեղ-վախտելից:

Այդ ժամանակ մոտս նստած ծեր թրքունին մի զննական հայացք գցեց հարևանի վրա և յերեսը դարձրեց հակառակ կողմը: Յես տեսա՝ ինչպես նրա ղեղնած աչքերից արցունքի կաթիլներ եյին թափվում: Յես նայում եյի այդ տանջված դեմքին և զգում, թե վորքան խորն է նրա վիշտը: Այդ ժամանակ անվստահ քայլերով մոտեցա նրան ու հարցրի:

— Մայրիկ, ինչո՞ւ յես լաց լինում:

— Եհ, վորդի, ինչ տեսմ. դարդերս նորոգվեցին, վոր նրա գլխի վերքը տեսա:

— Իսկ ինչո՞ւ այդ վերքը քեզ վիշտ պատճառեց:

— Իմ միակ զավակս՝ գոհ դնաց... — ասաց նա ու խոր ախ քաշելով լացակումած լուեց:

Յես չկարողացա համբերել. նորից հարցրի.

— Ի՞նչպես պատահեց այդ, մայրիկ: — Նա մի տխուր հայացք գցեց շուրջն ու սկսեց պատմել.

— Ինչպես շատ շատերը, իմ վորդի Հասանն ել դուրս եր յեկել փողոց և ծեծում եր կուրծքը շղթաներով: Այդ սրը շախսեյ-վախսեյի որն եր: Արյունը շատրվանի նման խփում եր նրանց գլուխներից: Գարնան առավոտ եր, — շարունակում ե նա արցունքները սրբելով, — բոլորը հավաքվել եյին մզկիթի դռանը և սպասում մուլային: Յերկար սպասելուց հետո մուլան դուրս յեկավ և իր յերկար քարոզով կապեց հարյուրավոր յերթասարգների աչքերը: Սկսվեց մի տակալի տեսարան: Թշնամիս ել եզ սրը շտեմնի: Փանխ-ջանիսն արյունովա գետին ընկան, ուշաթափվեցին, թե ինչ ե՛ ակամի դատաստանին արժանանան:

Հենց դրանցից մեկն ել իմ տղաս եր՝ Հասան: Նրան արյունովա հողով տուն հասցրին: Յերկու րուպեյից հետո մեռավ: Սե լինեք այն սրը: — Մի քանի վայրկյան լռելուց հետո շարունակեց. — դեռ ականջիս հնչում են Հասանիս վերջին խոսքերը. — «Յես մեռնում եմ, անա, բայց իմ միակ քրոջս՝ Սոնային լավ պահիր: Ել չգնաս մզկիթ, եզ անիծած մուլաների յերեսը չտեսնես», — ասաց ու աչքերը փակեց...

Այն, եզ շախսեյ-վախսեյն ու խաբերա անիծյալ մուլաներն ինձ նման քաշկաք շտեմն են քանդել, քանիսի...

Նա վերջացրեց իր պատմությունը: Գնացքը քափականին ճամապարհ եր անցել: Յես շարունակում ելի նույն ծեր թրքոտուն, փորը բարձրացրել եր պատառուտած զգեստի փեշը և սցրում իրար յետևից գլուխով արցունքներ ի կաթիլները:

17. Կ Ո Ւ Ը

Ձմռան մի գիշեր կար մի հարստնիք, հրճվում եր անգուսպ ամբոխը գյուղի գյուղն ևյին իջել հովիվ պատանիք ազնիվ տեղնեու պարի ու կոթի: Ու պարից հետո լեն հրապարակ բաց արին մեջտեղն արձակ գլխատան. գունաշին փչեց կոթի յեղանակ, անել ու ջանել իրարով անցան: Հարսն են տալիս «քաշի հա, քաշի...» ու գուրս քաշեցին գոռով յերկուսին. մինը մեր Մարոն, իսկ մյուսն Անուշի անդրանիկ յեղբայր գառնարած Մոսին: Վողջ գյուղը կանգնեց պարսպի նման, ջոկվեց, բաժանվեց յերկու բանակի, ամեն մի բանակ ընտրեց փահլան, կանգնեց թիկունքին տղերանց մեկի:

— Սրտապինդ կացեք, մի վախեք, տղերք: Իսկ նորեկ հարսի փարգի քամակից նայում են կանգնած հարսն ու ազնիվք: Աւ տաքանում են տղերքը սաստիկ, փեշերը հավաք խրում են դոտին գետին են դարկում ձեռքերը հաստիկ, իրար են հասնում թափով մոլեգին... Աղաթ կա սակալն են մութ ձորերում, ու միշտ հնազանդ հնոց աղաթին ամբոխի միջին իզիթն իր որում գետին չի դարկել ընկեր իզիթին: Ու իրար բռնած Մարոն ու Մոսին քաշում են ընկնում խոզապարկուկի, ընկնում են գետին, յեկնում միասին, գտվար ե իբրե հազթել մեկ-մեկի:

18. ԾԵՐՈՒՆՈՒ ՀԱՌԱՅՈՒՆՔԸ

Մեր ապրուման թնչ է... Ես խոր ձորերում
ես ե չորս քսան տարիս լրացավ.
Վոչ մի խնդուխտն տեսա իմ որում,
վոչ ել մի անգամ աչքս լիացավ:

Ամբողջ ամառը առանց տաքիլեթ
պտիտ եմ գալի ես ձորի միջին,
կոխիս եմ տալիս հազար ցավի հետ
և չեմ կարենում—չեմ հասնում վերջին:

Պապներից ենքան ոգուտ չի գալի,
ինչ նրանց համար յես փող եմ տալի
զլուխը քարը, զոնե փող լիներ,
ել ինչու եսքան մարդ զանգատ կաներ:

Յախ եմ հավաքում, կրակ եմ վառում,
սրա համար ել փող եմ վճարում:
Ես դափեն թնչ է,—մի լերկու լատան,
կիսը ու վեց անգամ տարան գառապտան:

Ասում են՝ գեղ ես կարել գու մերին:
Իրանցն ասում են ու քեզ չեն բուռ.
մինչև չտեսնես մեծին, պիտերին,
կիսի տես նրանք թնչքան են ուզում:

Գոգն ել մի կռնից, գեղն ել մյուս կռնից.
աչքդ թեքեցիր—բանիդ տեղը չես.
քաշում են տանից, քաշում են գանից,
ու չես իմանում՝ փք կոզմը թաչես:

Թե տանուներին զանգատ եմ գնում,
բան չեմ վաստակում՝ բացի գուշմանից.
գողերի հեաքը իր ունեն ե տանում.—
համեցեք գիվան ուղիք սրանից:

Նստեցնում ե քեզ, մի յերկու բաժակ
տաք չուր խմեցնում կամ մի թաս ողի.
— Դու գնա, պապի, միամիտ քնիր,
յես աչքի լուսը կհանեմ գողի...

Դարձել ե աշխարհն, ախպեր, առուփաթ,
սերը դարձել ե սուր ու շուրք՝ արին,
վոչ ամսթ ունի ուժեղը, վոչ վախ —
վալը յեկել ե տարել տկարին:

Տափլեր — տաք կերակուր
Դալիա — տաղաճարիկ (տախտակից չինած տնակ)
Լասան — բարակ տախտակ
Գեզ — թաց փայտ
Մեր — անտառ
Պիսեր — գրագիր:

19. ՀԱՆԱՐԱԿ

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
մանիր ապիտակ մալանչներ,
մանիր թերեր հաստ ու բարակ,
փոք ես նոգամ իմ ցավեր:

Տիգրանիկս գուրգա չունի,
հանդ ե գնում վոտաբաց,
Գաբրիելս չուխա չունի,
միշտ տնում ե սուգ ու լաց:

Ձվալ չունենք, չաթու չունենք,
վոչ սամոտեն, վոչ պարան,
ալոպես աղքատ դեռ յեղած չենք,
կտրվել ե ամեն բան

Դեռ հարս եյի, վոր գործեցի
քսնի կապերա, խալիչա,
բայց դրանցից շուտ զրկվեցի,
հիմա չունեմ մի քեչա:

Կարմիր որս, յերբ սեպցավ,
պարաքը մնաց թեև քիչ,
պարտաւորով սիրան ել սեցավ,
յեկավ տարավ ամեն ինչ:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
մանիր սպիտակ քուլաներ,
մանիր թելեր հասա ու բաբակ,
վոր յես հոգամ իմ ցավեր:

20. ԱՌԱՋԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Տաք քամին հալեցրեց դաշտերի ձյունը ու գրոհեց
դեպի Մայմեխի լեռնալանջերը. առատ ձյան հաստ շեր-
տերից ազատված գետինը շնչում եր հողի գուրալի հոտով,
առել եր, փափկեր:

Մի վեցորյակ ե, ինչ հինգ բրիգադան ել մեզվի
նման ներս ու դուրս եյին անում դյուղից դաշտ, պա-
րարտանյութ շաղ տալիս, ամեն մեկը գիտեր իր հոգը
իւր պարտականությունը:

Իրիկունը, յերբ Սերգոն յեղների կերն եր տալիս,

բրիգադավար Մացաիը յեկավ, ասաց, թե առաւոտը վա-
րի յեն դուրս գալու, հենց վոր սիգնալ լինի՝ գութանն
ու յեղներն իրենց սարքով պատրաստ լինեն, վոր հա-
վաքվեն կոպերատիվի առաջը:

... Մյուս որը սիգնալից 40 րոպե անց՝ ամենինչ
պատրաստ եր, բոլորը հրապարակումն եյին:

— Բրիգադ առ բրիգադ դեպի խարամի դաշտը,
մալը... — գոռաց կոլխողի նախագահ Հմայակը ճիշտ այն
պես, ինչպես Կարմիր բանակում յեղած ժամանակ:

Գութանների յերկար շարանը ձգվեց դեպի դաշտ,
վողջ բազմությունն ել նրա յետևից:

Համգաչիմանն այդպիսի բան իր որում չէր տեսեր
Սերգոն ուրախությունից արտասվում եր:

Վորոշեցին փորձնական վարն սկսել դպրոցի հողա-
մասում:

Հինգ բրիգադաների առաջին ողակները բաց արին
առաջին սև ակոմները, տասնհինգ գութան միջանի բո-
ւպեյում սեպերին դաշտը: Յեզները խամացել եյին ու
դժվար եյին լուծը քաշում, ծոռն եյին գութանն աջ ու
ձախ:

Համգաչիմանի կոլխողն առաջին քննությունը բռնեց,
փորձնական վարը հաջող անցավ: Հրահանգ տրվեց վարը
դադարեցնելու:

Գյուղամիջում բացվեց բազմամազգ միտինգ, գութա-
նավորների ընդունեցին ուսանելով: Յկրը կարգացին
պարզաւորվադների և խրախուսանքի արժանացողների
ցուցակում Սերգոյի անունն ել, Սերգոն բարձրացավ
սայլի վրա ու ասաց.

— Ընկերներ, մենք հիմա չե, վոր մրցանակ պիտի
ստանանք, յերբ ցածներ, հնձներ, կարտեր, շատ բերք
ստանանք ե՞ն ժամանակ տվե՞ք իմ մրցանակը:

21. ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Յեղի՛ր, ում կյանքը անիծել է,
 ով ճորտ է, մերկ է և սարուկ:
 Մրդեն վառվում են մեր սրտերը,
 արդեն կռվի յենք մենք ձգտում:
 Այս հին աշխարհը կփոքենք մենք
 մինչև հիմքը և հետո
 մեր նոր աշխարհը կշինենք մենք,
 ուր վոչ սարուկ կա, վոչ դժգոհ:
 Մա՛յ յե վերջին կռիվը
 և պայքարը մեծ,
 ինտերնացիոնալը
 աշխարհը կփրկե:

Վոչ վոք չի տա մեր փրկությունը,
 վոչ խենթ հերոսը, վոչ արքան:
 մենք պետք է մեր ազատությունը
 կռենք ձեռքով մեր սեփական:
 Վորպեսզի շուտ փշրենք մեր լուծը
 և յետ խենք վողջ հողը մեր —
 խփենք մուրճը, տանք մեր ուժը,
 քանի յերկաթը տաք է դեռ:
 Մա՛յ յե վերջին կռիվը
 և պայքարը մեծ:
 ինտերնացիոնալը
 աշխարհը կփրկե:

Հոկ մենք, ճորտեր ու բանվորներս
 ունենք անխախտ մի իրավունք՝
 ասել, վոր հողը մերն է, մերն է,
 կորչի հարուստը թող սղորուկ:

Յեղ յերբ պայթի մեծ փոթորիկը,
 և կուշտ շները չքանան,
 նորից յերկիրը և յերկինքը
 մերն են ու մերը կմնան:
 Մա՛յ յե վերջին կռիվը
 և պայքարը մեծ:
 ինտերնացիոնալը
 աշխարհը կփրկե:

22. ՄԻ ՈՐԱՎԱՐ ՀՈՂ

Մոնան և իր ամուսին Մարտիրոսն աղքատ գյուղացիք
 էյին: Ունեյին—չունեյին՝ մի զույգ այծ, վորոնց կաթով
 ասլորում էյին, մի ճախարակ, վորով Մոնան բամբակի
 թել եր մանում վաճառքի համար, և մի բահ, վոր ամեն
 որ վաղ առավոտյան Մարտիրոսն ուսին դրած՝ դնում եր
 գյուղամեջ և այնքան վիզը ծռած կանգնում, մինչև վոր
 դրացիներից մեկը՝ միքանի կոպեկ վճարելով՝ վարձում
 եր նրան և ամբողջ ուրը բանեցնում իր գաշտում:

Այսպիսի դառն աշխատությամբ դարձյալ գոհ էյին
 նրանք, յերբ կարողանում էյին իրենց խրճիթի մեջ
 հանգիստ քուն վայելել: Իսկ այդ բախտը խիստ սակավ
 եր հաջողվում նրանց:

Մի ուր Մարտիրոսին իր մոտ կանչեց գյուղատեր
 խանի վորդին՝ Ռիզա բեկը:

Յերկյուղից խեղճ գյուղացու շունչը կարվեց մինչև
 խանի վորդու մոտ հասնելը: Բայց տեսնելով նրա ուրախ
 դեմքը, ազատ շունչ քաշեց և մինչև դեռ խոնարհվելով՝
 յերկրապագեց նրան:

— Ինչո՞վ ես պարապում, Մարտիրոս, — հարցրեց
 Ռիզա բեկը:

— Աղքատի պարապմունքն ի՞նչ պետք է լինի, աղա՛, վոտիդ մոխիր դառնամ: Որը դադարեմ եմ, որն ուտում, — պատասխանեց գյուղացին կրկին գլուխ տալով:

— Դու ուժեղ և առողջ տղամարդ ես, Մարտիրոս, դու կարող ես ունենալ քո արորը և որավարը, վոր պարապես հոգադործությամբ:

Մարտիրոսը չդադարելով գլուխ տալուց՝ պատասխանեց. —

— Յես աղքատ մարդ եմ, աղա՛, քեզ մատաղ դառնամ:

— Հիմար, — հպարտությամբ գյուղացու խոսքը կրտրեց բեկը. իմ հպատակներից ո՛վ է հարուստ. բայց յես տալիս եմ նրանց հող, սերմ և բոլոր պարագաները, վորոնք հարկավոր են վարուցանքի համար, և նրանք գրանով ապրում են:

— Դուք միշտ վողորմած եք դեպի ձեր ծառաները, տեր իմ:

— Յես քեզ նույն նսլատակով կանչեցի ինձ մոտ: Յես գիտեմ, վոր դու աշխատավոր մարդ ես: Յես չեմ կամենում, վոր դու աղքատ ապրես: Դեռ տանտիրոջ մոտ, յես հրամայել եմ նրան ուսլ քեզ բոլոր պխուրքները վարուցանքի համար:

— Աստված քեզ յերկար կյանք տա, աստված ի՞նչ կյանքից կտրի ձերի վրա ավերացնի, — ասաց գյուղացին և շնորհակալությամբ հեռացավ:

* * *

Գարնան սկիզբն էր:

Մարտիրոսի յերգի ձայնն արդեն լսելի յեր լինում գաշտից, ուր նա հերկում էր իր որավարը:

Միջանի շաբաթից հետո նրա ցանքն սկսավ բուս-

նել, կանաչել և տճեր բայց նրա հետ անհկատելի կերպով աճում ու բազմանում էր տոկոսը նրա պարտատոմսակի, վոր նա տվել էր խանի վորդուն:

Անցավ ամառը, յեկավ աշունը: Մարտիրոսը հնձեց իր արտը, կալը կախեց և զուտ ցորենի շեղջը կիտեց կալի մեջ: Ուրախությամբ նայում էր իր հունձքի պտղաբերության վրա:

Յեկավ կալվածատիրոջ գործակալը, ցորենը չափեց, տասնորդը վեր առավ վորպես հողի վարձ, մի մասը վեր առավ դիվանի տուրքի փոխարեն, մի մասը վեր առավ նրա պարտքի տոկոսի փոխարեն: Կալի մեջ մնաց միայն հարգը և այնքան ցորեն, վոր բավական չեր խեղճ յերկրագործի նույն ձմեռվա ապրուստին:

— Ի՛նչո՛ւ յես այդպես տխուր, — հարցրեց կինը:

— Այնպես, քեֆս տեղը չի, — պատասխանեց Մարտիրոսը:

— Ասա, ի՛նչ է պատահել, հիվանդ ես, ի՛նչ ե:

— Եհ, ել ի՛նչ պետք է լինի: Ամբողջ տարին աշխատեցի, մաշվեցի, ելի գատարկ մնացի:

Յեվ Մարտիրոսը պատմեց կնոջը, թե ինչպես այդ բոլոր կողոպտեցին իրեն:

— Դո՛նե պարտքդ թափեցի՞ր, — հարցրեց կինը:

— Պարտքը ելի մնաց այնպես, ինչպես կար, — պատասխանեց Մարտիրոսը, խոր հոգոց հանելով:

— Հիմա ի՛նչ պետք է անես:

* * *

Անցան մի քանի դարուններ: Անցան մի քանի աշուններ:

Դյուղից դուրս, իր փոքրիկ յերեխան կրծքին սեղմած՝ կանգնած էր Սոնան: Արտասուքն աչքերին, նա ճանապարհ էր դնում ամուսնուն դեպի ոտար աշխարհ:

— Կընամ, Սոնա, յերկրե-յերկիր ման կգամ, կմաշվեմ,
կկոտորվեմ, փող կվաստակեմ և կազատեմ քեզ և իմ յե-
րեխան պարտատերից,— առաց խեղճ գյուղացիքն և համ-
բուրեւով աղի յերեսը, հեռացաւ դեպի պանդխտութիւնս:

23. ՌՈՒՇԱՆԻ ՔԱՐԱՓԸ

Չաթնանց գերդաստանն անհուշ որերից
յեղել է գյուղում անվանի, հարուստ:
Նա զավթել է միշտ լավը հողերի:
Յորենն է փտել Չաթնանց ամբարում:
Աճել է ժամ ու ամպուհովանու տակ,
փորպես դարավոր մի ընկուղենի:
Փռելով գյուղում արմատներն անտառ՝
ծծել է նրա հյութը վայրենի:
Իշխել է, գյուղում փորպես տանուտեր,
փորպես մի վայրի կառավարութիւն:
Յեւ կուշ է յեկել թշվառ գյուղացիքն
Չաթնանց դարավոր ընկուղենու տակ՝
աչքերը հառած ավելցուկ հացին,
իր փողորմի թախտին անդիտակ:
Իսկ Չաթնանց Սանթրոսն անողոր լաճով
ճեղքել է գլուխն աղքատ Ռուշանի,
հափշտակել է ընտիր սևահոգն
ու սովի մատնել մի տուն ընտանիք:
Մեռել է Ռուշանն եղ վերջից հետո
և ման է յեկել Սանթրոսն անպատիժ,
գատարան մտած հիսուն մանեթով
դարձել է չհաս, չենթակա դատի:
Չաթնանց են այսպես ու կերել մարտել
Չաթնանք Ռուշանի հողը բերքառատ:
Բայց հին անունն է վրան մնացել
գյուղում ասում են Ռուշանի քարափ:

ՀԱՐՅԵՐ

1. Վեր չըջանի գրվածք է Ռուշանի քարափը:
2. Հին կարգերում լավ հողերն ունէին պատկանում:

24. ՌԻՂԻՂ ԺԱՄԻ ԶՈՐՍԻՆ

Հունվարյան ցուրտ որ էր. փողոցում յեռում էր
կյանքը: Բազաքային բանկի զուռը դանդաղ բացվեց և
զուրա յեկավ կռկռիկ հագնված մի մարդ: Նա պորտֆելը
ձեռքին ինչ-վոր տեղ էր շտապում:

Իրոքում նրան սպասում էր ավտոն. շոֆերը նրան
տեսնելուն պէս աշխատացրեց մեքենան, իսկ պորտֆե-
լավոր մարդը ծանրորեն բարձրանալով ավտոլի վրա, շո-
ֆերին ինչ-վոր հասցե պատվիրեց:

Սա տեղի յեր ունենում Յեվրոպայի քաղաքներից
մեկում, փորտեղ շատերն իրենց սեփական ավտոներն
ունեն:

Այս պորտֆելավոր մարդը միտքը Հեգն էր՝ անգլի-
ական էայտնի առևտրական:

Նա մեկնում էր մի ուրիշ քաղաք, փորտեղ պետք է
մասնակցեր մի կարեւոր խորհրդակցութեան:

Միտքը Հեգն այդ խորհրդակցութեանն անպայման
պետք է մասնակցեր, հակառակ գեպքում նրա առևտրա-
կան գործերը կստանալին վատ ընթացք: Պետք է մեկ-
նել անպայման առաջին իսկ գնացքով:

Հիմա ժամի լերերն է, և ազատ կարելի յի տոմս
գնել:

Իսկ ավտոն արագընթաց սլանում էր լեվրոպական
քաղաքի հարթ փողոցներով:

Միտքը Հեգը, փորի գլուխը շատ մտածելուց ծանրա-
ցել էր, աչքերը հանդարտ փակած ննջում էր:

Հանկարծ մեքենան կանգ առավ. փողոցի ափին միտ-
քը Հեգը վեր թռչելով աչքերը լայն բացեց:

Նրա դիմաց գլուխը բաց կանգնած էր շոֆերը:

Միտարը Հեգն արագորեն մեկնեց թևը և նայեց ժամացույցին. ժամի չարսն եր.

— Ի՞նչ պատահեց, — հարց տվեց նա շոֆերին:

Շոֆերը գլխաբաց հանդարտ կանգնած, ձախ չէր հանում:

— Համը ես ինչ ե, — վարտաց սրտենգած Հեգը. — գնացքից ուշանում ենք:

Այն ժամանակ շոֆերը շրջվեց, և միտարը Հեգն առաջին անգամ իր կանգնած տեսավ, վոր զարմացած նայում են իրեն:

— Հունվարի 27-ին, ցերեկվա ժամը 4-ին թաղում են Լենինին... Յերթեկոթյունը կանգ է առնում... հինգ րոպե... սրբ...

Միտարը Հեգը շփոթվեց, ձեռքի մեջ ճմռեց սիգարը և լցվեց անասելի կատաղությամբ:

